ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՆՋ ՀԵՏԱԶՈՏՈՂԸ. ՍԵՆԵՔԵՐԻՄ ՏԵՐ- ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՏԴ 929
DOI: 10.56246/18294480-2023.14-09

ՔԵՇԻՇՅԱՆ ՄԵՐԻ
Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտաշխատող, պատմաբան
էլփոստ՝ marykeshishian@mail.ru

Մեր մենակեացները իրենց միտքն ու հոգին եզերել էին վանքերի պարիսպներով ու կամարներով: Ս. Տէր-Յակոբեանը, սակայն, մենակեաց էր լայն, անպարագիծ աշխարհում, առանց վանքի ու կամարների, ինքն իր խոր հոգու եւ մտքի դարբասներով շրջանակուած:
Ո՛վ գիտէ, գուցէ մարդկային կեանքի անմեկնելի, բարդ ողբերգութիւններից մէկն էլ այն է, թէ ինչո՞ւ բնութիւնը օժտում է մարդուն ստեղծագործելու, մնայուն գործեր երկնելու բոլոր տուեալներով եւ, սակայն այդ երկունքն ու ստեղծագործութիւնը թագնուած են մնում ցարդ մտքի եւ հոգու խորը, բազմադիմի հնադարաններում: Ինչո՞ւ...
Ս. ԳՈՒՐԵԱՆ

Ականավոր հայագետ Սենեքերիմ Տեր-Հակոբյանը հայագիտության ոլորտում ճանաչված ու վաստակաշատ գիտնականներից է, որը թեև շատ կարճ ապրեց, բայց իր վարած համեստ կյանքի և գիտական գործունեության ընթացքում կորստից փրկեց հայ մշակույթի դարավոր գանձերը: Անգնահատելի է նրա գիտական գործունեությունը այդ բնագավառում:

Տարբեր տարիների նա դասավանդել է Երևանի, Բաքվի, Նախիջևանի, Շուշիի, Թավրիզի և Ալեքսանդրապոլի հայկական դպրոցներում: 1916 թվականին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում (որպես հայոց պատմության դասախոս): Կրթարանի բարձր դասարաններում դասավանդել է հայոց լեզու և հայ մատենագրության պատմություն: Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանով նշանակվել է «Արարատ» ամսագրի խմբագրական կազմի անդամ (1916թ.), օգտակար եղել դրա հրատարակման աշխատանքներին մինչև փակվելը: 1917 թվականին նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանի տնօրենի օգնական, այնուհետև հին ձեռագրերի պահոցի վարիչ:

Հատկապես 1915թ. հայոց ցեղասպանությունից հետո՝ Հայաստանի տարածքում կատարած նրա գիտարշավների ընթացքում, մեծ թվով ազգագրական նյութեր են հավաքվել, որոնք ներկայումս ցուցադրվում են Հայաստանի պատմության թանգարանում: Անգնահատելի է նրա գործունեությունը հայ միջնադարյան ձեռագիր մատյանների հավաքման ասպարեզում: Լինելով Մատենադարանի առաջին տնօրենը՝ նա ձեռագրական հավաքածուները համալրել է ընդհանուր հաշվով 1000-ից ավելի միավորով:

1920 թվականի վերջին Ս. Տեր-Հակոբյանը նշանակվել է Էջմիածնի Մատենադարանի վարիչ: Ստալինյան բռնաճնշումների տարիներին ձերբակալվել է: Վախճանվել է բանտում 1938 թվականին: Ս. Տեր-Հակոբյանի բազմաթիվ անավարտ աշխատություններ անհետացել և հափշտակվել են նրա ձերբակալությունից հետո: Արդարացվել է հետմահու՝ 1956 թվականին:

Հոդվածում ներկայացված է նրա կյանքի և գիտական գործունեության մանրամասներ, որոշ նյութեր հրապարակվում են առաջին անգամ (խոսքը արվեստաբան Սերիկ Դավթյանի չտպագրված հուշերի մասին է, որոնք վերաբերում են Սենեքերիմ Տեր-Հակոբյանին):

Բանալի բառեր՝ *Սենեքերիմ Տեր-Հակոբյան, Մատենադարան, Սերիկ Դավթյան, Մելիք-Օհանջանյան, Էջմիածին, ձեռագիր, մատյան, Գյումուշխանե, տարազ, ցեղասպանություն, բռնադատված, Մաշտոց, մշակույթ:*

Խիստ սակավ նյութեր և հիշատակություններ են պահպանվել անվանի հայագետ, Մաշտոցի անվան Մատենադարանի առաջին, նահատակ տնօրեն Սենեքերիմ Խաչատուրի (Չելեբի) Տեր-Հակոբյանի մասին: Նրա կյանքը նվիրում էր հայագիտությանը, անմնացորդ նվիրում, որ իր ժամանակակիցների և ընկերների կողմից արժանացել է «գիտության հավատարիմ Ցերբեր» մականվանը:

Հայագիտության անխոնջ նվիրյալը, ում մտերիները և հարազատները Սեն կամ Սենո են անվանել, ծնվել է 1881 թվականին Տրապիզոնի նահանգի Գյումուշխանե (Ծանախ) գյուղաքաղաքում: Մանկությունն անցել է ծննդավայրում: Ավարտել է տեղի նախակրթական հայկական դպրոցը, 1896-1903թթ. ուսումը շարունակում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որտեղ աշակերտում է Մ. Աբեղյանին, Հր. Աճառյանին, Հ. Մանանդյանին, Ստ. Կանայանցին, Ս. Հարությունյանին, Ս. Տիգրանյանին, Կ. Տեր-Մկրտչյանին և այլ նշանավոր հայագետների: Ավարտականին պաշտպանում է «ԺԶ դարու Հայոց եկեղեցական պատմությունը» ավարտական շարադրանքը, որն արժանանում է «հույժ գովելի գնահատականի»[1]:

Ավարտելով ճեմարանի դասարանական ու լսարանական դասընթացները՝ մի կարճ ժամանակաշրջան հաստատվում է Թավրիզում. 1903-05թթ. դասավանդում տեղի Լիլավա թաղամասի Հայկազյան հայկական դպրոցում: Այստեղ ծանոթանում ու մտերիմ կապ է հաստատում Թավրիզի հայկական դպրոցների տեսուչ, հոգաբարձու Կարապետ Պիոնյանի հետ, ավելի մտերմանում Գևորգեան ճեմարանի իր դասախոսի՝ անվանի լեզվաբան Հրաչյա Աճառյանի և նրա տիկնոջ՝ Արուսյակի հետ, որոնց հետ ապրում է նույն հարկի տակ[2]:

Այդ տարիներին շատ հայորդիներ էին իրենց ուսումը ստանում արտասահմանում, հատկապես Գերմանիայում և Ֆրանսիայում: Նրանցից էր նաև Ս. Տեր-Հակոբյանը, որն ուսման և գիտության նկատմամբ մեծ ծարավ ու հետաքրքրություն ուներ: Ճեմարանի ուսուցչական խորհրդի որոշմամբ և Խրիմյան Հայրիկի օրհնությամբ 1905 թվականին մեկնում է Գերմանիա, ընդունվում Բեռլինի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետ (փայլուն առաջադիմությամբ ավարտում է 1910թ.)[3]: Հմտանում է բանասիրության, պատմության, ժողովրդական ստեղծագործությունների նյութերը ուսումնասիրելու և մեթոդական տվյալներին ծանոթանալու մեջ:

---

[1] ՀՀ Ազգայի արխիվ, ֆոնդ 312, ց. 2, գ. 1545, թ. 4:

[2] Աճառյան Հր. Հ., Կյանքիս հուշերից, Ե., 1969, էջ 291:

[3] Տէր-Վարդանեան Գ., Սենեքերիմ Տէր-Յակոբեան՝ պետականացուած մատենադարանի առաջին տնօրենը, «Բանբեր Մատենադարանի», Ե., 2020, N29, էջ 8:

Սենեքերիմ Տեր-Հակոբյանը բեռլինյան ուսումնառության տարիներին:

Հայրենիքին, հայագիտությանը ծառայելու մեծ փափագն ու նվիրումը Ս. Տեր-Հակոբյանին պարտավորեցնում է ժամանակ չկորցնել. վերադառնում է Կովկաս: Տարբեր ժամանակներ դասավանդում է Երևանի, Բաքվի, Նախիջևանի, Թիֆլիսի, Շուշիի և Ալեքսանդրապոլի հայկական դպրոցներում:

1916 թվականին դասախոսական աշխատանքի է անցնում Էջմիածնի Գևորգյան ճեմարանում որպես հայոց պատմության դասախոս: Հոգևոր կրթարանի բարձր դասարաններում ավանդում է հայոց լեզու և մատենագրության պատմություն: Նրա ժամանակակիցները վկայում են, որ այդ զույգ առարկաների հետ կապված ուսումնասիրական, քննական ամեն ինչ սերտել էր, գիտենալով նյութերի շուրջ այնպիսի մանրամասնություններ (թվեր, դեպքեր, պատմություններ, դրվագներ), որ նրա հետ շփում ունեցողն ուղղակի ապշում էր հայագետի ունեցած անբավ գիտական պաշարի վրա[4]:

Այդ տարիներից մնացած մի եզակի մասունք է պահպանվում Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում՝ Ս. Տեր-Հակոբյանի անձնական արխիվում: Խոսքը Հայոց պատմության և աշխարհագրության նրա դասախոսությունների սղագրության մի անթվակիր տետրի մասին է, որը գրի է առել ճեմարանի նրա աշակերտ ոմն Սուքիասյանը[5]:

Արտասահմանյան կյանքն ու շփումները ոչինչ չեն փոխում նրա վարք ու բարքում. «Միեւնոյն զգոյշ, քաղաքավարի, ինքն իր մէջ ամփոփուած համեստ մարդն էր: Ընթերցանութիւնը կարծէք գալիս էր փոխարինելու կեանքի բազմազան այլ մարզերից եկող տպաւորութիւններն ու ակնկալութիւնները: Գիրքն ու գրքերի աշխարհն էր, ինչպէս առաջ, նրան ներքնապէս կերակրողն ու յենարան հանդիսացողը: Գրքերից յետոյ նրա միակ հոգեպարար աշխարհը բնութիւնն էր եւ պատմական անցեալի ու փառքի կոթողները, աւերակները, որոնց հետ կապուած էր իր նուրբ ու ազնուական հոգու բոլոր թելերով: Խորապէս սիրում էր շրջիլ, թափառիլ, մանաւանդ այցի գնալ պատմական աւերակներին ու կոթողներին: Գիտեր զարմանալի մանրամասնութեամբ այդ

---

[4] **Գուրեան Ս.**, Սենեքերիմ Տէր-Յակոբեան (Մեր անփոխարինելի կորուստները), «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1953, թիւ 53, էջ 110:

[5] Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Ս. Տեր-Հակոբյանի թողոն, թղթ. 72, վավ. 17:

վայրերի հետ կապուած իրադարձութիւնները, անձերը, նրանց հերոսական գործերը ու ժամանակագրական բոլոր թւերը»[6]:

1916 թվականին Գևորգ Ե կաթողիկոսի բարձր կարգադրությամբ նշանակվում է «Արարատ» ամսագրի խմբագրական կազմի անդամ՝ ամենայն ջանասիրությամբ օգտակար լինելով դրա հրատարակման աշխատանքներին մինչև փակվելը:

1917 թվականին կաթողիկոսական սրբատառ կոնդակով նշանակվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանի տնօրենի օգնական, այնուհետև ձեռագրապահոցի վարիչ: Նույն տարվա դեկտեմբերին՝ ճեմարանի փակվելուց հետո՝ մինչև 1920 թվականի վերջերը, դասավանդում է Երևանի տարբեր դպրոցներում:

1918 թվականին, Հայաստանի Առաջին Հանրապետության Ներքին գործերի նախարարի հրամանով, նշանակվում է Քանաքեռի որբանոցների ընդհանուր կառավարիչ, ինչպես նաև Հայաստանի օգնության կոմիտեին կից որբանոցներում որպես վարիչ[7]: 1919 թվականին ընտանիք է կազմում՝ ամուսնանալով Արաքս Դիանիսիոսի Մուշեղյանի հետ:

1915-17թթ. Կովկասյան մարդասիրական ընկերության կողմից Ս. Տեր-Հակոբյանը մասնակցում է այն գիտարշավներին, որոնց ընթացքում հավաքում և նկարագրում էին Առաջին աշխարհամարտի տարիներին հատկապես հայ գաղթականության մեջ ցիրուցան եղած ազգագրական նյութերը: Արդյունքում հավաքվում և փրկվում է հայկական տարազի և զարդեղենի, արվեստի տարատեսակ նմուշներ, որոնք այսօր իրավամբ համարվում են Հայաստանի պատմության և ազգագրության թանգարանների անկրկնելի ցուցադրանմուշները: Հավաքչական աշխատանքը շարունակում է նաև հետագա տարիներին:

Հետաքրքիր հիշողություն է պահպանվել անվանի արվեստագետ, ազգագրագետ Սերիկ Դավթյանի հարցազրույցներից մեկում, որում հիշել է. «1921 թվականին Էջմիածնում էին ապրում և ստեղծագործում նշանավոր դեմքեր, այդ թվում Կարո Մելիք-Օհանջանյանը, Սենեքերիմ Տեր-Հակոբյանը: Մի օր գնացի Սենեքերիմենց: Նստել էր անվանի ազգագրագետը ավանդական թախտին, փոքրիկ սեղանի առաջ և հոնգուր-հոնգուր լաց էր լինում: Սեղանին թափված էին կանացի ասեղնագործ հագուստներ: Հարցրի լացի պատճառը: Ձեռքը մեղմությամբ դրեց հագուստների վրա և ասաց.

- Սրանք՝ այս ազգագրական մասունքները, արվեստի այս գործերը ինձ են հասել ոչ սրանց տերերի միջոցով: Այս հագուստների տերերին սպանել է թուրքի յաթաղանը: Ինչե՞ր կորցրինք, տեր աստված...

Նստեցի, վերցրի, նայեցի հագուստները: Վարպետը մանրանկարչական գործ էր կատարել՝ այնքան նուրբ ու գունագեղ էին զարդերը: Նայում, ցավում ու հիանում էի և հիշում Գարեգին Հովսեփյանին, նրա նվիրած գրքերը, որոնք պիտի նաև առարկայացածը հասկանալու ճաշակ, հմտություն և բանալի տային ինձ: Այդ զգեստները հիմա զարդարում են մեր պետական պատմական թանգարանը»[8]:

Պահպանվել է նաև Ս. Դավթյանի անտիպ հուշագրությունը, որում գրում է. «Սենեքերիմը մատենադարանի վարիչն էր: Նա ինձ ցույց էր տալիս ձեռագրերի հեքիաթային մանրանկարները: Այդ նույն շենքում էր նրա տնօրինության տակ գտնվող ազգագրական նյութը, հագուստի ասեղնագործած մասեր և այլ իրեր: Անվերջ դիտում էի... Թե ձեռագրերը, թե ազգագրական նմուշները այն վայրերից էին, ուր եղեռնը հնձել էր հայերին, ոչնչացրել տասնյակ հազարավոր

---

[6] **Գուրեան Ս.**, Սենեքերիմ Տէր-Յակոբեան, էջ 112:

[7] **Ութուջյան Ա.**, Սենեքերիմ Տեր-Հակոբյան. Նշանավոր ճեմարանականներ, Ս. Էջմիածին, 2008, պրակ Բ, էջ 437-438: ***Նույնի՝*** Տէր-Յակոբեան Սենեքերիմ, «Քրիստոնեայ Հայաստան», լրագիր, Ս. Էջմիածին, 2008, յուլիս Բ, N 14, էջ 3-5:

[8] **Նարյան Մ.**, Ժանյակահյուս կյանք.- Կուլտուր-լուսավորական կյանք, ամսագիր, Ե., 1974, N5, էջ 16:

տաղանդավոր ստեղծագործողների, մայր մանուկին, ավերել եկեղեցիները, տները, այգիները, թալանել, կողոպտել գազանային վայրագությամբ: Այդ ամենը խոր վշտի հետ իմ մեջ ծնեցնում էր մի հպարտ գիտակցություն, որ հայ կինը, հայ տղամարդը օժտված են եղել գեղեցիկը զգալու, գեղեցիկը արտահայտելու, ստեղծելու աննման տաղանդով, վարպետ ունակություններով»[9]:

1920 թվականի դեկտեմբերի 20-ին Ս. Տեր-Հակոբյանը նշանակվում է Էջմիածնի Մատենադարանի վարիչ[10], իսկ 1921 թվականի փետրվարի 1-ից՝ Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի գիտական խորհրդի անդամ[11]: 1923 թվականի հունիսի 25-ից նշանակվում է նույն ինստիտուտի թանգարանի վարիչ: 1922 թվականից մինչև չարաբաստիկ 1937 թվականի փետրվար ամիսը եղել է Մատենադարանի վարիչը, որը վարել է 16 տարուց ավելի, ապա կեղծ մեղադրանքների հիման վրա ձերբակալվել է և հեռացվել[12]:



Ս. Տեր-Հակոբյանը Էջմիածնի մատենադարանի պաշտոնավարման ժամանակ:

Էջմիածնի մատենադարանում նրա պաշտոնավարության տարիներին՝ 1921-22թթ., լույս է տեսնում «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» խորագրով Ա և Բ հատորներով միացյալ գիրքը: Սա արժեքավոր մի աշխատություն է, որում ամփոփված են նաև Ս. Տեր-Հակոբյանի «Երիզայի հունարէն արձանագրութիւններից», «Նորայր Բուզանդացի» և «Լևոն Լիսիցյան» խորագրերով արժեքավոր հոդվածները: 1921 թվականին Ս. Տեր-Հակոբյանը Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի գիտական նստաշրջանում զեկուցում է կարդում՝ «Ղզլթամուրի Ուրարտական բերդի մնացորդները» թեմայով:

Դեռևս 1903 թվականին «Արարատ» ամսագրում տպագրվում է նրա «Վարդանայ վարդապետի Բաղիշեցւոյ ցուցակգրոց Անմրդոլու վանուց» խորագրով ուսումնասիրությունը (նշյալ աշխատանքով նա սկսում է իր գիտական գործունեությունը և իրեն դրսևորում որպես շնորհալի ուսումնասիրող): Այդ տարիներից մանկավարժական աշխատանքին զուգընթաց Ս. Տեր-Հակոբյանը զբաղվում է բանասիրությամբ և ազգագրությամբ: Եղել է նաև հմուտ գրաբարագետ, քրդագետ և թուրքագետ: Հմտորեն է տիրապետել մի շարք եվրոպական և արևելյան հին ու նոր լեզուների: Զարմանալի չէ, որ բացի մայրենիից՝ նա իր մասնագիտական բնագավառում խոսել և

---

[9] **Դավթյան Ս. Ս.**, Հուշեր (անտիպ): *Ծանոթագրություն՝* Պահվում է անձնական արխիվում:

[10] Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 122, ց. 4, գ. 6, թ. 10:

[11] **Ադամյան Ա. Հ.**, Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, N12, էջ 87: ***Տե՛ս՝*** ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 108:

[12] **Եգանյան Օ.**, Մատենադարանի ձեռագրական հավաքածուները. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի (Կազմեցին՝ Եգանյան Օ., Ձեյթունյան Ա., Անթաբյան Փ., խմբագրությամբ՝ Խաչիկյան Լ., Մնացականյան Ա.), Ե., 1965, էջ 214:

կարդացել է գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, լատիներեն, հունարեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն և քրդերեն լեզուներով:

1935 թվականին Ս. Տեր-Հակոբյանը մասնակցում է Սանկտ-Պետերբուրգում կայացած «Իրանական արվեստի եւ հնությունների» իրանագիտական միջազգային կոնգրեսին, որը ղեկավարում էր անվանի հնագետ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին: Իրանի մշակույթը և արվեստը ներկայացնող բացառիկ այդ միջոցառմանը մասնակցել են աշխարհի քսանից ավել երկրների արևելագետ-գիտնականներ, հնագետներ ու արվեստաբաններ[13]:

1935-36թթ. Անդրկովկասյան գիտությունների ակադեմիա ստեղծելու ընթացքում ընտրվում է թղթակից անդամ:

Ազգային դիմագիծ ունեցող մտավորական հայ է եղել Ս. Տեր-Հակոբյանը: Հայոց ցեղասպանությունից հետո, ջանք չխնայելով, մեծ համբերատարությամբ փնտրում և հավաքում է արևմտահայոց արվեստի դարավոր ու արդեն ցրված մասունք-նշխարները: Դրանք կորստից ու անհայտությունից փրկելու գիտակցմամբ և մեծ նվիրումով 1920 թվականից կրկին շարունակում է հայագետ, հոգևորական Գարեգին Հովսեփյանի հետ երկար ժամեր և օրեր շրջել Հայաստանի արևմտահայ գաղթականներով բնակեցված շրջաններում ու հավաքել հարուստ ազգագրական նյութերը: Միաժամանակ Մատենադարանի հավաքածուն հարստացնում է նոր ձեռագրերով: Ս. Տեր-Հակոբյանը գիտակցել է, որ գալու է ժամանակ, երբ մեր կորսված պատմական հայրենիքից փրկված յուրաքանչյուր մասունք ավելի արժեքավոր և նվիրական է դառնալու: Մի առիթով հնահավաք, բանասեր Հարություն Քյուրտյանի հետ Խորհրդային Հայաստանում ունեցած հանդիպման ժամանակ Ս. Տեր-Հակոբյանը նշում է. «Ես բոլոր հոգիովս այս ձեռագիրներուն պահպանութեան նուիրուած եմ: Մահուընէ զատ ոչինչ զիս պիտի կարենայ բաժնել ասոնց պահպանութենէն: Եւ լաւ գիտցիր, որ եթէ ես չըլլամ, սա քու ալ այնքան սիրած այս ձեռագիրները կը ցրուին, կը փճանան: Ես կեանքս իսկ աչքս առած եմ եւ պիտի մնամ պաշտօնիս գլուխը: Արդ՝ քեզմէ մեծ բան մը կը ակնկալեմ, որ կը յուսամ՝ գլուխ կը հանես: Երբ Թաւրիզ հասնիս, դիմէ Մելիք-Թանգեան Սրբազանին ու միայն անոր եւ ուսուցիչ-տնօրէն Պիոնեանին ըսէ, որ աշխատին ինծի համար պարսկական անցագիր մը հանել եւ օր առաջ իմ ձեռքս հասցնել, որուն շնորհիւ ես պիտի կարենամ անձս անմիջական վտանգէ փրկել եւ մինչեւ վերջ ձեռագրաց փրկութեան աշխատիլ»[14]:

Հայ մշակույթի անգին գանձերին խնամք ու հոգատարություն հատկացնելուց բացի՝ հնարավորինս փորձել է մշակել և պահպանության համար պայմաններ ստեղծել:

Իր կյանքի վերջին մոտ 15 տարին Ս. Տեր-Հակոբյանը սկսում է Մատենադարանի ձեռագիր հուշարձանների գիտական ցուցակագրությունը, արդյունավետ աշխատելու համար մշակում է հատուկ համակարգ (կատալոգի ձև), հմտորեն որոշել է ձեռագրերի ստեղծման, նկարազարդման մոտավոր ժամանակը:

Ս. Տեր-Հակոբյանի վաստակը մեծ է ոչ միայն գիտավարչական աշխատանքների բնագավառում, այլև այն, որ նա զգալի գործ է կատարել՝ ՀՍՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի պատվերով հավաքելով մատենադարանի հազարավոր ձեռագրերում առկա պատմական-աշխարհագրական հատվածներն ու պատառիկները, որոնք մինչ այդ անհայտ են եղել հայագիտությանը:

1935 թվականին իր երկարամյա գիտական գործունեության և բարեխիղճ աշխատանքի համար Ս. Տեր-Հակոբյանը արժանանում է պետական շնորհակալագրերի: Թվում է ճակատագրի հեգնանք կամ խաղ, որ գիտնականը, հայ մտավորականը, ով տարիներ շարունակ իր ճիգերն ու

---

[13] **Арзуманян А. М.**, Братья Орбели, Е., 1976, с. 166-167. ***Տե՛ս նաև***՝Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ս. Տեր-Հակոբյանի թողոն, թղթ. 76, վավ. 125:

[14] **Քյիւրտեան Յ.**, Սենեքերիմ Տէր-Յակոբեան, «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1953, դեկտեմբեր, թիւ ԺԲ, էջ 94-99:

ուժը, միտքն ու հոգին էր նվիրել գիտությանը, կորստի ճիրաններից մասունք առ մասունք փրկելով Հայոց գանձերը, մեկ րոպեում գրչի մեկ հարվածով և անհիմն մեղադրանքով պետք է դառնար, այսպես կոչված, ժողովրդի թշնամի: Գիտնականի վաստակը արհամարհվում է մեկ ակնթարթում: Անհասկանալի մի հիմնավորմամբ արտասահմանում կրթություն ստացածները կամ ծնվածները, այնտեղ հարազատ ունեցողները և նրանց հետ նամակագրական կապի մեջ գտնվողները համարվում էին անվստահելի տարր: Առանց բացատրության այդ ազնիվ անհատականությունը հեռացվում է դիրեկտորի պաշտոնից: Շատ կարճ՝ պաշտոնավարում է որպես դիրեկտորի տեղակալ: Պաշտոնի իջեցումը բնականաբար միտումնավոր է արվում, այն է՝ նուրբ և զգայուն հոգու տեր մարդուն ավելի խոցելի դարձնելու համար: Դրանք կիրթ մարդուն նվաստացնելու ստալինյան ժամանակներին հատուկ բիրտ և արատավոր բարքեր էին. հոգեպես կոտրել մարդկային կամքը, սկզբունքը, որից հետո անցնում էին ավելի դաժան գործելաոճի:

Հալածանքները սաստկանում էին, ներկայացվում ամեն տեսակի անհիմն մեղադրանքներ, կատարվում էին ստորացուցիչ և ծանրագույն հարցաքննություններ, որի ժամանակ մարդն անցնում էր անասելի տառապանքների միջով: Պաշտոնանկությունից մի քանի ամիս անց՝ 1937 թվականի սեպտեմբերի 25-ին, ՆԳԺԿ-ի աշխատակիցների կողմից գիտնականը ձերբակալվում է: Խորհրդային երկրում մոլեգնող կամայականությունների և հետապնդումների գաղջ մթնոլորտը չշրջանցեց նաև նրան, իսկ ստալինյան ճամբարներում վերապրողներից շատ քչերին հաջողվեց հետագայում հոգեպես ապաքինվել:

Այդ նույն չարաբաստիկ 1937 թվականին, պատմության և գրականության պատմության ինստիտուտների հանձնարարությամբ, Ս. Տեր- Հակոբյանը և անվանի հայագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանը միահամուռ սկսել էին պատրաստել Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» քննական-ակադեմիական տեքստը՝ մատենադարանում առկա ձեռագրերի օրինակների բաղդատությամբ: Նախքան ձերբակալությունը՝ մատենադարանի յոթ ձեռագրերից երեքը բաղդատված են եղել. չորրորդ ձեռագիրը անավարտ է մնում: Երկու անվանի հայագետները ձերբակալվում են: Կարապետ Մելիք-Օհանջանյանը, այդ ազնվագույն հայը, անցնելով ստալինյան աքսորի դժոխքով և անպատմելի հոգեկան ու ֆիզիկական տառապանքներ կրելով, դիմանում և փրկվում է՝ ապագայում շարունակելով իր հայանվեր, բեղուն գիտական աշխատանքը (չնայած որ այդ ճանապարհին շատ խոչընդոտների է հանդիպում, միտումնավոր արված գիտական արգելքների և նվաստացումների): Ի դեպ, Կ. Մելիք-Օհանջանյանը լավ ճանաչելով Ս. Տեր-Հակոբյանին, մի առիթով հիշատակել է. «Նա ձեռագրերի ժամանակագրութեան որոշման գծով հազվագիւտ և նուրբ հոտառութիւն ուներ…»[15]: Հատկանիշ, որը մասնագիտական բնագավառում քչերին է բնատուր, ի վերուստ շնորհված:

Անշուշտ, հայոց բանահյուսության բնագավառում ևս մեծ է Ս. Տեր-Հակոբյանի ներդրումը: Նա հարստացրել է ժողովրդական «Սասունցի Դավիթ» էպոս-պատումը վեց նոր ու գեղեցիկ պատումներով, որոնք լույս են տեսել «Սասնա ծռեր»-ի Ա և Բ հատորներում: Դեռևս 1915 թվականին, լինելով Մոկս գյուղաքաղաքում, Ս. Տեր-Հակոբյանը 55-ամյա հողագործ և արհես-տավոր, բանասաց Վարդան Մուխսի-Բազիկյանից գրի է առնում «Սասնա ծռեր» պատումի տարբերակներից[16]: Պատմողը՝ բնատուր, ի ծնե օժտված լինելով ասացողի հազվագյուտ տաղանդով, էպոսը նրան պատմում է մեծ ոգևորությամբ, սրբորեն հետևելով ավանդույթին և երգելով առանձին դրվագներ: Ի դեպ, նա իմացել, և պատմել է նաև մեծ թվով հեքիաթներ և վիպական պատումներ: Մուխսի Վարդանը, ով նաև ուխտավոր էր ու ապրուստի միջոց է հայթայթել՝ դեգերելով տարբեր քաղաքներում, եղել է նաև Կ. Պոլսում (Առաջին աշխարհամարտի սկզբում գաղթում է Կովկաս, վերջնականապես հաստատվում Էջմիածնի Մուղանջուղ (այժմ՝

---

[15] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ս. Տեր-Հակոբյանի թողոն, թղթ. 76, վավ. 121:

[16] «Սասնա Ծռեր». Հայ ժողովրդական վեպ (ընտիր պատումներ), Ե., 2008, էջ 201:

Հովտամեջ) գյուղում, որտեղ և վախճանվում է): Ս. Տեր-Հակոբյանից բացի՝ Մուխսի Վարդանի պատմածը 1911 թվականին գրի է առել նաև մոկացի ուսուցիչ Հարություն Գիլանյանը և զուգահեռ հրատարակել 1936 թվականին:

1916 թվականին Վաղարշապատում Ս. Տեր-Հակոբյանը բնիկ գավաշցի ասացող Մարգարիտ Սարգսյանից գրի է առնում «Թլոր Դավիթ և Միեր» պատումը[17]: Իր դաշտային-գիտարշավային տետրում Ս. Տեր-Հակոբյանը սույն բանասացի մասին թողել է կենսագրական սուղ, բայց արժեքավոր տեղեկություններ: Նա խորապես տպավորվում է անուս, բայց իր միջավայրում փորձառու ասացողի համբավ ունեցող այս հայուհի կնոջից, որը, բացի «Սասնա ծռեր»-ից, հայերեն պատմում է նաև «Ռոստամ Զալ» վեպը («Շահ Նամե»-ի մոտիվներով), «Մոկաց Միրզա» քնարական պոեմը, մոտ երկու տասնյակ հեքիաթներ, կատարում երգեր:

«Սասնա ծռեր» էպոսի հավաքման և գրառման աշխատանքները լայնորեն շարունակվել է 1937 թվականին, որի աշխատանքներին մեծ ջանասիրությամբ մասնակցել են հատկապես Ս. Տեր-Հակոբյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը և Ա. Ղանալանյանը:

Ս. Տեր-Հակոբյանի շատ արժեքավոր գրքեր, աշխատությունների մեծ մասը առեղծվածորեն անհետացել են 1937 թվականին[18], երբ ձերբակալության ընթացքում խուզարկվել է նրա տունը: Մի մասը բռնագրավել են ՆԳԺԿ-ի աշխատակիցները, իսկ մի մասը, ըստ նրա որդու հիշատակման,[19] անհետանում է անհայտ չարագործների կողմից (հափշտակվել են Էջմիածնի նրա անտեր մնացած բնակարանից, երբ կինն ու զավակը գտնվելիս են եղել Երևանում):

Տարիներ շարունակ հեռու լինելով իր հայրենի ծննդավայր Գյումուշխանեից՝ մշտապես նամակագրական կապ է ունեցել հարազատների և ընկերների հետ: Այդ են վկայում նամակները, որոնք պահվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում[20]: Գյումուշխանեի մասին ամեն մի աննշան տեղեկություն, ազգագրական նյութ հետաքրքրել են նրան, շատերից խնդրել է գրի առնել և իրեն ուղարկել ժողովրդի մեջ տարածված հեքիաթներ և պատումներ, երգեր ու ասացվածքներ: Դրանք արժեքավոր են այնքանով, որ տեղի հայկական բարբառով են ու բարեբախտաբար ինչ-որ չափով պահպանվել են: Միաժամանակ ակնհայտորեն երևում է, որ Ս. Տեր-Հակոբյանն անմասն չի մնացել իր բարեկամներին հուզող հարցերից, պարբերաբար, իր հնարավորությունների սահմաններում, նյութական օգնություն և աջակցություն է տրամադրել նրանց: Հայոց ցեղասպանության ժամանակ նա ամեն ջանք և ծանոթություն գործադրում է՝ իր հարազատներից ու հայրենի քաղաքից տեղեկություն ունենալու համար և իր համաքաղաքացիների ու ժողովրդի հետ կիսելով նրանց բաժին հասած ողբերգական ճակատագիրը: Այդ է վկայում պահպանված մի անստորագիր նամակ, որի հեղինակը Ս. Տեր-Հակոբյանին հայտնում է, որ Տրապիզոնի նահանգում սով է սկսվել, և ծանր է հայության վիճակը[21]:

Տառապում է իր ծննդավայրի ու հարազատների կորստով, հայության բնաջնջման ու սպանդի փաստով: Կիրթ և բանիմաց, զգայական ներաշխարհ ունեցող մարդու համար շատ ավելի դժվար է հոգեկան ապրումների մղձավանջը, որը հաղթահարելու համար հոգու մեծ կորով և ուժ է պահանջվում:

Դժվար տարիներ էին, հայության բազմաթիվ հատվածների նման ցրված էին նաև գյումուշխանեցիների փրկված բեկորները, որոնք ամեն կերպ ջանում են միմյանց գտնել, կապ հաստատել: Երևանում ապրելու տարիներին ընտանեկան և ընկերական ջերմ կապեր է ստեղծում մեկ այլ տրապիզոնցու, ծնունդով Օրդուեցի Հակոբ Զորյանի ընտանիքի հետ, որը, ցավոք, նույն

---

[17] Նշվ. աշխ., էջ 269:

[18] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ս. Տեր-Հակոբյանի թողոն, թղթ. 76, վավ. 125:

[19] Չելեբյան-Տեր-Հակոբյան Է., Սենեքերիմ Խաչատուրի Չելեբի-Տեր Հակոբյանի կենսագրությունը, տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, արխիվային բաժին, Ս. Տեր-Հակոբյանի թողոն, ֆ. 41, թղթ. 76, վավ. 125, թ. 5:

[20] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ս. Տեր-Հակոբյանի թողոն, թղթ. 74բ, վավ. 59:

[21] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ս. Տեր-Հակոբյանի թողոն, թղթ. 76, վավ. 15:

ճակատագրին էր արժանանալու: Վերջիններս ընտանեկան նեղ հավաքույթների ժամանակ կարոտով հաճախ են հիշել իրենց ծննդավայրն ու բարբառը, հարազատներին, կենցաղն ու սովորույթները, (այդ մասին է վկայում Հակոբ Զորյանի գրած և բարեբախտաբար պահպանված մի նամակ)[22]:

Մ. Մատոցի անվան Մատենադարանի՝ նրա արխիվում պահվում է մոտ 310 վավերագիր, որոնք հիմնականում անտիպ են: Դրանք հրաշքով փրկված և պահպանված, արժեքավոր աղբյուրագիտական և պատմական նյութեր և ուսումնասիրություններ են: Այդ վավերագրերի մեջ են «Հայոց եկեղեցին ԺԶ դարում», «Տարեգրութիւն Տէր Բարսեղի», «Ավետիք պատրիարք», «Պոլսի պատրիարքութիւնը», «Ժամանակագրութիւն պատմութեան Ս. Երուսաղէմի», «Կիւմիշխանի եւ Տրապիզոնի հայոց վանքերի հնութիւնների եւ ժողովրդի սովորութիւնների նկարագրութիւնները», «Բժշկական պատմութեան մասին» ուսումնասիրությունների ձեռագրերը, Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների մասին նրա հավաքած նյութերը, որոնց կցված են ուսումնասիրողի դիտողությունները, հայերեն և այլ լեզուներով փոքրիկ բառարաններ, անավարտ հոդվածների սևագրություններ և այլ նյութեր:

Արժեքավոր են նաև արխիվում պահպանված նամակներն ու լուսանկարները: Նա անձնական և նամակագրական կապեր է ունեցել հայագետ, մանկավարժ Կարապետ Կոստանյանի, պատմաբան Հակոբ Մանանդյանի, ճարտարապետ Թորոս Թորամանյանի, հնագետ և ազգագրագետ Երվանդ Լալայանի, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի, Տիրայր վարդապետի, բանասեր, ձեռագրագետ Ներսես Ակինյանի, հայագետ, հնագետ Աշխարհբեկ Քալանթարի, զորավար Անդրանիկ Օզանյանի, բանաստեղծ, դրամատուրգ Վահան Միրաքյանի, աղբյուրագետ, հայագետ և թարգմանիչ Լևոն Մելիքսեթ-Բեկի, անվանի լեզվաբան Հրաչյա Աճառյանի, արվեստաբան, գրականագետ Գարեգին Լևոնյանի, ականավոր բանասեր Ստեփանոս Մալխասյանի, լեզվաբան և հայագետ Գրիգոր Ղափանցյանի, հայագետ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի, ազգագրագետ, հայագետ Երվանդ Շահազիզի, գրող Արշակ Չոպանյանի, պատմաբան Հակոբ Զորյանի, արևելագետ, էպոսագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանի և այլոց հետ, որոնց նամակները նույնպես Ս. Տեր-Հակոբյանի արխիվում են, ինչպես նաև պահվում են պաշտոնական զանազան գրություններ: Դրանցում շոշափվում են հայագիտական, բանասիրական և այլ բնույթի հարցեր:

Նրա հայագիտական և բանասիրական գործունեության մի շարք ուշագրավ հարցեր են բացահայտում նաև Մաշտոցի անվան Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանված և նրան ուղղված մի շարք մտավորականների նամակները (դիվանապետ Գյուտ եպիսկոպոս, Գարեգին Լևոնյան, Լ. Մելիքսեթ-Բեկ, Ա. Հովհաննիսյան, Մ. Քրիշչյան, Հ. Աճառյան, Ե. Լալայան, Ստ. Մալխասյան, Գր. Ղափանցյան, Գ. արքեպիսկոպոս Հովսեփյան, Ե. Շահազիզ, Ա. Չոպանյան, Հ. Պերպերյան)[23]:

Հրաշքով փրկված և պահպանված այդ նյութերը կարևորվում են այն առումով, որ թեկուզև պատառիկներ, բայց որոշակի կենսագրական տվյալներ են հաղորդում Ս. Տեր-Հակոբյանի բազմաբեղուն գործունեության լայն շրջանակների ու կապերի մասին: Նրա կենսագրության անհայտ մի էջի վրա լույս է սփռում Ս. Տեր-Հակոբյանին հասցեագրված Թագուհի Ն. Գորանյանի նամակը՝[24] գրված 1914թ. մարտի 20-ին (նամակից պարզ է դառնում, որ Թագուհին Ս. Տեր-Հակոբյանի վաղամեռիկ սիրեցեալի՝ Զարուհու քույրն է: Գեղեցիկ և սրտառուչ նամակ է):

Արժեքավոր են նրա արխիվում պահվող հայատառ քրդերեն , թուրքերեն և պարսկերեն գրի առնված հեքիաթներն ու քառյակները, ժողովրդական երգերը և պարերգերը, Քյոռ-օղլու,

---

[22] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ս. Տեր-Հակոբյանի թողոն, թղթ. 76, վավ. 53:

[23] **Զաքարյան Ա.Հ.**, Սենեքերիմ Տեր-Հակոբյանին ուղղված նամակներ, ԼՀԳ, 1985, N1, էջ 82-91:

[24] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ս. Տեր-Հակոբյանի թողոն, թղթ. 76, վավ. 7:

Ջանփոլադի մասին եղած նոր նյութերը, ինչպես նաև Մեսրոպ Մաքսուդյանի՝ 1916թ. Էջմիածնի ճեմարանում կարդացած «Գեղարվեստը հայ վանքերում» խորագրով դասախոսությունները[25]:

Պահպանվել են հետաքրքիր մակագրություններով լուսանկարներ, որոնք վերաբերում են Ռափայել Պատկանյանին (1879թ., խմբանկար), դերասան Պետրոս Ադամյանին (լուսանկարը 1885թ. նա նվիրել է նկարիչ Վարդգես Սուրենյանցին), Կոմիտասի նկարը (այն 1893թ. նվիրել է Համազասպ վարդապետին), ազգագրագետ Ե. Լալայանի և նրա տիկնոջ՝ Հայկանուշի լուսանկարները (1911թ., Ս. Տեր-Հակոբյանին մակագրած ջերմ խոսքերով)[26]:

Ս. Տեր-Հակոբյանի միակ որդու՝ Երկրորդ աշխարհամարտի մասնակից, փոխգնդապետ, բժիշկ Էդվարդ Չելեբյան-Տեր-Հակոբյանի հիշատակմամբ (ապրել է Ռիգայում, Լատվիա)՝ հայրը անձնական շփում և կապ է ունեցել հայ ժողովրդի մեծ բարեկամի՝ Ֆրիտյոֆ Նանսենի հետ, որից անձնական հուշագրով ստացել է նրա «Խաբված ժողովուրդը» (Betrogenes Volk) աշխատությունը՝ նվիրված հայ ժողովրդի տարաբախտ ճակատագրին: Այդ գիրքը նրա տան խուզարկության ժամանակ բռնագրավվել է ՆԳԺԿ-ի քննիչների կողմից: Ըստ որդու վկայության՝ անհետ կորել են նաև Ս. Տեր-Հակոբյանի՝ հատկապես իր կյանքի վերջին տարիներին գրած աշխատությունները, մասնավորապեսԻվանե և Զաքարե Զաքարյան եղբայրներին, Կիլիկիայի հայկական թագավորությանը մասին ուսումնասիրությունները: Մատենադարանում պահվող նրա արխիվին որոշ փաստաթղթեր 1976թ. ավելացնում է զավակը:

Սենեքերիմ Տեր-Հակոբյանը վախճանվում է բանտում 1938թ.:

1956թ. հունվարի 3-ին Անդրկովկասյան զինվորական շրջանի ռազմական ատյանի կողմից Ս. Տեր-Հակոբյանի գործը վերանայվում է՝ նրան միանգամայն անմեղ ճանաչելով[27]: Այդ օրերին, երբ Ստալինի և Բերիայի մահից հետո սկսեցին արդարացվել 37-ի անմեղ զոհերը և աքսորում գտնվողները, եղան ազնիվ և առաքինի մտավորականներ, որոնցից մեկը՝ Կարապետ Մելիք-Օհանջանյանը, իր դժվար կացությունն անտեսելով (նա խնամքին ուներ երկու անչափահաս զավակներ, կարիքի մեջ էր, իսկ կինը մահացել էր իր ձերբակալության ժամանակ), կարողացավ աջակցել վաղամեռիկ ընկերոջ ընտանիքին ու դիմում-խնդրագրեր ներկայացնել Հայաստանի սոցապ նախարարությանը, որ նեցուկ լինեն և գոնե բավարար, անհատական թոշակ նշանակեն Ս. Տեր-Հակոբյանի այրուն՝ Արաքսիին, որը, 18 տարի հոգեպես տանջանքներ կրելով, կորցրել էր առողջությունը[28]: Նման, բայց ավելի հակիրճ բնութագրական տալիս է նաև ՀՍՍՀ նախկին Լուսժողկոմ, կրկին բռնադատված և արդարացված Արտո Եղիազարյանը[29]:

Դաժան իրողություն է, երբ գլխատվում է մտավորականությունը, երբ ընտրվում է կադրային ջարդի քաղաքականությունը: Անմեղ մարդիկ դաժանորեն պատժվեցին չկատարած հանցանքների համար: Նրանց հանցանքն ընդամենը հայրենասեր և հայրենանվեր լինելն էր, իրերի և ժամանակի խորքը տեսնելը:

Հզոր կենսափորձի տեր, եզակի իմաստությամբ օժտված անհատների և գիտնականների սերունդ էր դա, որոնցից շատերը, ունենալով խորաթափանց միտք ու կյանքի դժվարություններից չհուսահատվելու իմաստուն կարողություն, նորից ոտքի կանգնեցին ու հոգու մեծ ամրությամբ, արիությամբ, սերունդներին գիտելիք ավանդեցին:

---

[25] **Ադամյան Ա.Հ.**, Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվը, էջ 87:

[26] Նշվ. աշխ., էջ 88:

[27] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ս. Տեր-Հակոբյանի թողոն, թղթ. 76, վավ. 124:

[28] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ս. Տեր-Հակոբյանի թողոն, թղթ. 76, վավ. 121: ***Ծանոթագրություն՝*** Կ. Մելիք-Օհանջանյանի՝ Ս. Տեր-Հակոբյանի համար տված բնութագիրը բաղկացած է երեք ձեռագիր էջից, գրել է 1956թ. մարտի 1-ին: Անվանի արևելագետը առանց վախի նշում է, որ Ս. Տեր-Հակոբյանը զոհ դարձավ Բերիայի դրածոների կողմից:

[29] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ս. Տեր-Հակոբյանի թողոն, թղթ. 76, վավ. 122:

Նրա ապրած կարճ, սակայն բովանդակալից կյանքը անսահման նվիրում էր հայագիտությանը: Գիտնական, հայագետ, ով մշտապես վայելելով հայոց ձեռագրերի և մագաղաթյա մատյանների առինքնող հրաշագեղություններն ու պատմությունները, դրանք ոչնչացումից փրկեց՝ հարստացնելով մեր մշակույթի գանձարանը, թողնելով բարի անուն և հիշողություն:

TIRELESS RESEARCHER OF THE ARMENIAN CULTURE AND SCIENCE: SENEKERIM TER-HAKOBYAN

KESHISHYAN MERI
Historian, Researcher at Matenadaran
e-mail: marykeshishian@mail.ru

Prominent Armenologist Senekerim Ter-Hakobyan is one of the well-known and merited scholars of Armenology, who lived a very short life, but during his modest life and scientific activity, he saved the centuries-old treasures of the Armenian culture from loss. His scientific activity in that field is invaluable.

In different years he taught in Armenian schools in Yerevan, Baku, Nakhichevan, Shushi, Tabriz and Alexandropol. In 1916 he taught at the Gevorgyan Theological Seminary in Etchmiadzin as a lecturer of the Armenian history. In the upper grades of the school, he taught the Armenian language and the history of Armenian bibliography.

By the order of the Catholicos of All Armenians, he was appointed a member of the editorial staff of "Ararat" magazine (1916), and contributed to its publication until its closure.

In 1917 he was appointed as an assistant to the director of the Etchmiadzin Museum, then as ahead of the archive of ancient manuscripts.

After the Armenian Genocide, especially in 1915, during his scientific expeditions in Armenia, a large number of ethnographic materials were collected, which are currently on display in the History Museum of Armenia. His activity in the field of collecting Armenian medieval manuscripts is also invaluable. Being the first director of the Matenadaran, he contributed to the replenishement the manuscript collections, with a total of more than 1000 manuscripts.

In 1920 S. Ter-Hakobyan is appointed head of the Matenadaran in Etchmiadzin.

He was arrested during the years of Stalin's repression. He died in prison in 1938. Many of Ter-Hakobyan's unfinished works disappeared and were stolen after his arrest. He was justified posthumously in 1956.

The article presents details of his life and scientific activity; some materials are published for the first time (we are talking about the atypical memoirs of art critic Serik Davtyan, which also refer to Senekerim Ter-Hakobyan).

Key words: *Senekerim, Matenadaran, Serik Davtyan, Melik Ohanjanyan, Etchmiadzin, manuscript, book, Gyumushkhane, national costume, genocide, convicted, Mashtots, culture.*

НЕУТОМИМЫЙ ИССЛЕДОВАТЕЛЬ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ И НАУКИ - СЕНЕКЕРИМ ТЕР-АКОПЯН

КЕШИШЯН МЕРИ
Историк, научный сотрудник Матенадарана
электронная почта: marykeshishian@mail.ru

Выдающийся арменовед Сенекерим Тер-Акопян - один из известных и заслуженных ученых-арменоведов, проживший очень короткую жизнь, но своей скромной жизнью и научной деятельностью спас от утраты многовековые сокровища армянской культуры. Его научная деятельность в этой области бесценна.

В разные годы преподавал в армянских школах Еревана, Баку, Нахичевана, Шуши, Тавриза и Александрополя. В 1916г. преподавал в Эчмиадзинской Георгиевской духовной семинарии (как лектор истории Армении). В старших классах школы преподавал армянский язык и историю армянской библиографии.

По приказу Католикоса Всех Армян был назначен членом редакции журнала «Арарат» (1916г.) и помогал в его издании до закрытия. 1917г. был назначен помощником директора Эчмиадзинского музея, затем заведующим архивом древних рукописей.

После Геноцида армян 1915 года во время его научных экспедиций по Армении им было собрано большое количество этнографических материалов, которые в настоящее время экспонируются в Музее истории Армении. Неоценима и его деятельность в области коллекционирования армянских средневековых рукописей. Будучи первым директором Матенадарана, он пополнил рукописные коллекции пополнил в общей сложности более чем на 1000 рукописей.

В 1920г. С. Тер-Акопян назначен директором Эчмиадзинского Матенадарана.

Был арестован в годы сталинских репрессий. Умер в тюрьме в 1938 году.

Многие незаконченные работы С. Тер-Акопяна исчезли и были украдены после его ареста. Оправдан посмертно, в 1956 году.

В статье представлены подробности его жизни и научной деятельности, некоторые материалы публикуются впервые (речь идет о неопубликованных мемуарах искусствоведа Серика Давтяна, в которых также упоминается Сенекерим).

Ключевые слова: *Сенекерим, Матенадаран, Серик Давтян, Мелик-Оганджанян, Эчмиадзин, рукопись, книга, Гюмушхане, национальный костюм, геноцид, осужденный, Маштоц, культура.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 14.03.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 19.03.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.: